

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԳԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 41-րդ տարեդարձի առիթով անփամբ Ձեր և Կառավարության բոլոր անդամների արևշատության և գործոց հաջողության համար: Աղոթում ենք սովետական ժողովուրդների բարորության և մեր Մեծ Հայրենիքի հետագա ծաղկման և ամբողջ աշխարհում խաղաղության հաղթանակի համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 41-րդ տարեդարձի առիթով հանեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները անձամբ Ձեր և Կառավարության բոլոր անդամների բաշառողության և գործոց հաջողության համար: Աղոթում ենք մեր Մեծ Հայրենիքի հետագա ծաղկման, սովետական ժողովուրդների բարորության և ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և ջերմագին բարեմաղթությունները Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 41-րդ տարեդարձի առիթով: Ի սրտե մաղթում ենք սովետական ժողովուրդներին բարգավաճություն ու առաջադիմություն և ամբողջ աշխարհին խաղաղություն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից հայտնում ենք ջերմագին շնորհակալություններ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 41-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր սրտագին շնորհավորանքի և բարեմաղթությունների համար:

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Սովետական Հայաստանի Կառավարության և իմ անունից հայտնում ենք մեր ջերմագին շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 41-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր անկեղծ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և իմ անունից ջերմագին շնորհակալություն եմ հայտնում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 41-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր շնորհավորանքների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ